

Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի աշխատանքային այցերը

28.08.2014



Օգոստոսի 27-

ին փոխմարզպետ Նունե Մովսիսյանը այցելել է Հայկական Կարմիր խաչի ընկերություն : ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանի հետ աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են Կարմիր խաչի առաջնահերթ տարվա ծրագրերում ընդգրկվելիք հարցերը: Փոխմարզպետը ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնցից, մասնավորապես, հավանության են արժանացել բազմազան ընտանիքների աջակցության եւ տնային խնամքի բարելավման, անհայտ կորած ազատամարտիկների 9 ընտանիքների, սիրիահայերի մանր ձեռնարկատիրության, Նարեկ թաղամասում եւ հանրակացարանում բնակվող փախստականների աջակցության ծրագրերը:

Օգոստոսի 28-

ին Նունե Մովսիսյանը աշխատանքային ացով հանդիպել է Նաեւ „Կամրջակ“, հասարակական կազմակերպության հովանդացի տնօրեն Մարիա Գորիսի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզում համատեղ իրականացնել Ծաղկահովիտ համայնքի 1,5 կմ. երկարության խմելու և Նոր ջրագծի կառուցման, ինչպես նաեւ գյուղական Յմանկապարտեզի գույքով ապահովման ծրագրերը:

Նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսվել են: